Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի
N 100-Ա որոշման

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի չափի և կիրառման

1. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճաններ և կիրառվում է բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենցող համայնքային ծառայողների համար սահմանել հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 10%-ի չափով:
3. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենցող համայնքային ծառայողների հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի
N 100-Ա որոշման

ԿԱՐԳ

Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի չափի և կիրառման

1. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, ովքեր Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում ունեն երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժ և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
2. Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար սահմանել հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 10%-ի չափով:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ